ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/76

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4037-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 12.03.2020թ.-ի թիվ 435/20 գրության հիման վրա, 16.03.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.03.2020թ.-ին:

17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/76 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին և 15.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2020թ.-ին:

2. «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 12.03.2020թ.-ի թիվ 435/20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է որ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2019թ.-ի դեկտեմբերի 19-ին կնքված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Ոստի ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացվել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (Armeps) միջոցով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը, նիստերի արձանագրությունները և պայմանագիրը:

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Ադա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Ադա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4037-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 24.03.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ադա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրով» ՓԲԸ-ի կողմից հայտարարված թիվ ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ընտրված մասնակից է ճանաչվել 7-րդ չափաբաժնի մասով:

Չափաբանին 7- Բժշկական դիմակներ միանգամյա օգտագործման

Արտադրող երկիր՝ Չինաստան

Հարգելի գնահատող հանձնաժողով, ինչ գրեմ մի կազմակերպությանը, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրով» ՓԲԸ-ին, որը իր գրության-պահանջի մեջ գրում է, որ համաձայն ՀՀ օրենքի ապրանքը պետք է մասնակցի պահեստում դրված լինի, որ նոր մասնակցի մրցույթին:

Մենք բոլորս էլ գիտենք որ ամբողջ աշխարհում առկա է բժշկական դիմակների ահռելի դեֆիցիտ, կապված ստեղծված իրավիճակի հետ: Կորոնավիրուսի հետ կապված ամբողջ աշխարհում ստեղծված իրավիճակի պայմաններում ինչ կարող է անել մեր կազմակերպությունը, երբ միանգամյա օգտագործման Բժշկական դիմակներ չկան: Նույն բանը գրությունով տեղեկացվել է պատվիրատուին:

Սա է մեր կազմակերպության դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է պատվիրատուի այն պնդմանը, որ պատվերը տվել է դեռ 2019թ.-ի դեկտեմբերին, ուղղակի ասեմ, որ պայմանագիրը ուժի մեջ է մտել համաձայնագրի ստորագրման պահից, այսինքն 05.02.2020թ.-ին և նա ուղղակի իրավունք չուներ պահանջել մեզանից մատակարարել ավելի շուտ, քան 05.20.2020+20 օրացուցային օր:

Ի դեպ, պայմանագրի համաձայնագրով որպես գնման ժամանակացույց նշված է. «կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2020թ-ի դեկտեմբերի 25-ը»:

Խնդրում ենք Ձեզ հաշվի առնելով վերոգրյալը, «Աիդաս Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի թիվ 1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 11.03.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2020թ.-ին կնքված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով գնման պայմանագիրը «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

կողմից 20.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4037-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ վճարել դրա համար:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր /«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ/:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքվեած թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր շրջանակներում 05.02.2020թ.-ին կնքված համաձայնագրի թիվ 1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 11.03.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2020թ.-ին կնքված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով գնման պայմանագիրը «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 20.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները):

Սույն գործի փաստերի համաձայն, մասնավորապես՝ 05.02.2020թ.-ին կողմերի միջև կնքված Համաձայնագրի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ապրանքների մատակարարման ժամկետը սկսել էր հոսել 05.02.2020թ-ից և պետք է ավարտվեր մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը: Բողոքներ քննող անձը հաստատված է համարում նաև, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված ժամկետների խախտման հանգամանքը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված խախտումն արձանագրելու համար, անհրաժեշտ է այդ ժամկետի սպառված (վերջացած) լինելու հանգամանքի առկայությունը: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ արձանագրել ժամկետների և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն մինչև Պայմանագրով սահմանված՝ Մասնակցի պարտավորությունների կատարման ժամկետի լրանալը՝ ժամկետների խախտման հիմքով, չէր կարող լուծել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3» ծածկագրով պետական գնման Պայմանագիրը, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4037-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/76 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**